

Սիրելի Ծխականներ,

Աստուծոյ ողորմութեամբ բարեյաջող տարի մըն ալ բոլորեցինք:

Հետեւեալը ամփոփումն է անցեալ տարուան մէջ կատարած պաշտօնիս:

1: Կիրակի առտուները կատարեցինք առաւօտեան ժամերգութիւն, մատուցինք

Ս Պատարագ, եւ քարոզեցինք Հայերէն եւ Անգլերէն լեզուներով:

2: Մեծ Պահքի մէջ Ձորեքշաբթի երեկոյները, ժամը 7 ին կատարեցինք Խաղաղական

եւ Հանգստեան ժամերգութիւն:

3: Խորհրդակատարութիւններ-նշանտուք 1, Պսակ 1, Թաղում 2:

4: Տնօրհնէք Մնունդին եւ Ջատկին:

5: Գերեզմանօրհնէք Մէմորերը Տէյիին:

6: Այցելութիւններ, Սբաւորներուն, Հիւանդներուն եւ այլոց:

7: Նախագահած եմ եկեղեցական կազմակերպութիւններու ժողովներուն:

8: Խմբագրած եմ եկեղեցւոյ Լոյս Թերթիկը:

9: Դասաւանդած եմ Հայ Դպրոցի աշակերտներուն եւ վարած եմ վերահսկիչի պաշտօն

10: Փետրուար 2ին, Տէր եւ Տիկին Մանուկ Պաղտիկեաններուն, Տիկին Մանուշակ

Կալազանին եւ Երէցկին Մարիին հետ մասնակցած ենք Նիւ-Պրիթլնի Գանձընս
ավ Զըրչի տուած ճաշկերոյթին:

11: Ապրիլ 21 ին, Կիրակնօրեայ Վարժարանի աշակերտներուն Հաղորդութիւն եւ ճաշ:

12: Մայիս 2-3 մասնակցեցայ Հոգեւորականաց համագումարին, եւ Մայիս 4-5 Թեմական

Պատգամաւորական ժողովին որ գումարուեցաւ Ուստրի մէջ:

13: Յունիս 17ին Նիւ-Եորքի Ս Վարդան Մայր Տաճարը ուխտի գացինք ուր
պատարագեցի եւ քարոզեցի:

14: Նոյեմբեր 9 ին Ծխական Խորհուրդի անդամներուն հետ ներկայ եղայ Շըրշա-
նային ժողովի մը որ գումարուեցաւ Սբրինկմիլտի Ս Յովհաննէս եկեղեցիի
սրահին մէջ:

15: նոյեմբեր 10 ին, Պր.Արթըր Սիմոնեանին հետ ներկայ եղանք Հարտանրտի
Ս Գէորգ եկեղեցիի տարեդարձի ճաշկերոյթին:

Հիւր եկեղեցականներ մեր մէջ:

Կիրակի, Մարտ 25 ին Տ.Առնակ Բհնյ.Գասպարեան պատարագեց եւ քարոզեց:
Կիրակի, Ապրիլ 15 ին, Առաջնորդ Սրբազան Հայրը, Գերշ.Տ Թորգոմ Արքեպիսկոպոս
Թորգոմ Մանուկեան պատարագեց, քարոզեց եւ կէսօրէ վերջ նախագահեց
եկեղեցւոյ տարեդարձի հանդիսութիւններուն:

Կիրակի, Յուլիս 29 ին Տ Միքայէլ Բհնյ.Պիւթէրո պատարագեց եւ քարոզեց:

Այսու շնորհակալութիւն կը յայտնեմ եկեղեցւոյ թարեշնորհ Սարկաւազներուն, Դպրաց Դասին, Պատուարժան Ծխական Խորհուրդին, Տիկնանց
Միութեան, Հայաստանեայց Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան, այսինքն
էյ, Սի, Ուայ, Օյ, էյ, ի Կիրակնօրեայ Վարժարանի պաշտօնէութեան, Հայ Դպրոցի
Ուսուցչին, ^{Ամոսսնացեալ} Զոյգերու կազմակերպութեան եւ Ս Յարութիւն
եկեղեցիի ^{Իւրեան} անդամին, իրենց կատարած աստուածահաճոյ գործին համար:

Աստուած օրհնէ զմեզ եւ պարգեւէ երկնային իմաստութիւն ու շնորհք
որ միշտ ծառայենք Իր փառքին եւ մեր ժողովուրդին:

Գեորգ Բհնյ. Սաստուրեան
Վարդան Բհնյ.Տ Ասատուրեան